# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*06 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 65

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 12 ՄԻԱՎՈՐ 46,75501 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց/մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգով, 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ հողային օրենսգրքի 76-78 հոդվածներին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետին, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին համապատասխան՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող կից հավելվածում նշված հողատարածքները մրցույթով տրամադրել վարձակալության:
2. Սույն որոշումը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված

Համայնքի ղեկավարի 06/07/2020թ.
թիվ 65 որոշման

| Հ/հ | Սեփակ. | Նպատ. նշանակությունը | Գործառն. նշանակությունը | Մակերեսը հա | Զուտ եկամուտը | Զուտ եկամտի 15% | Հողի վարձ | Մեկնարկային գինը | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 0,79251 | 9100 | 1365 | 1081,77615 | 1100 | 5 տարի |
| 2 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 2,36433 | 6600 | 990 | 2340,6867 | 2400 | 5 տարի |
| 3 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 3,2546 | 6600 | 990 | 3222,054 | 3300 | 5 տարի |
| 4 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 4,57531 | 6600 | 990 | 4529,5569 | 4600 | 5 տարի |
| 5 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 1,39073 | 6600 | 990 | 1376,8227 | 1400 | 5 տարի |
| 6 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 1,87752 | 6600 | 990 | 1858,7448 | 1900 | 5 տարի |
| 7 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 4,03169 | 6600 | 990 | 3991,3731 | 4000 | 5 տարի |
| 8 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 6,54151 | 6600 | 990 | 6476,0949 | 6500 | 5 տարի |
| 9 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 2,35895 | 6600 | 990 | 2335.3605 | 2400 | 5 տարի |
| 10 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 4,59279 | 6600 | 990 | 4546.8621 | 4600 | 5 տարի |
| 11 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 8,9145 | 21300 | 3195 | 28481.8275 | 28500 | 10 տարի |
| 12 | ՀՀ | Գյուղատնտ. | վարելահող | 6,06057 | 17200 | 2580 | 15636.2706 | 16000 | 10 տարի |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մուշկամբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*06 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 66

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ հողային օրենսգրքի 67 հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետին, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին համապատասխան՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքին սեփականության իրավունքով պատկանող կից հավելվածում նշված հողատարածքները աճուրդով օտարել՝ սահմանելով մեկնարկային գները:
2. Սույն որոշումը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված
համայնքի ղեկավարի 06/07/2020թ.
թիվ 66 որոշման

| Հ/հ | Օգտագործման նպատակը | Գտնվելու վայրը | Մակերեսը/հա/ | Մեկնարկային գինը/դրամ/ | Հողամասի ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բնակելի կառուցապատում | ք. Վայք, Կամոյի փողոց, 1-ին նրբանցք 41 | 0,04191 | 340000 | 10-003-0006-0126 | Բնակավայրերի | Այլ |
| 2 | Բնակելի կառուցապատում | ք. Վայք, Կամոյի փողոց, 1-ին նրբանցք 40 | 0,07749 | 640000 | 10-003-0006-0127 | Բնակավայրերի | Այլ |
| 3 | Հասարակական կառուցապատում | ք. Վայք, Ջերմուկի խճ. 23/23 | 0,0072 | 60000 | 10-003-0024-0330 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատում |
| 4 | Գյուղ գործունեություն ծավալելու | Վայք համայնք, գ. Արին | 0,63829<br>5,00363<br>2,43458<br>0,90042 | 40000<br>320000<br>155000<br>60000 | 10-005-0112-0108<br>10-005-0112-0107<br>10-005-0112-0109<br>10-005-0112-0106 | Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական | Այլ<br>Արոտավայր<br>Այլ<br>Արոտավայր |
| 5 | Գյուղ գործունեություն ծավալելու | Վայք համայնք, գ. Արին | 0,08841<br>0,08793<br>1,50922<br>0,37575<br>0,0456<br>0,18387<br>0,09734<br>0,31505 | 6000<br>6000<br>100000<br>124000<br>4000<br>12000<br>8000<br>20000 | 10-005-0162-0012<br>10-005-0162-0011<br>10-005-0112-0105<br>10-005-0161-0007<br>10-005-0136-0048<br>10-005-0503-0002<br>10-005-0503-0004<br>10-005-0503-0003 | Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական | Արոտավայր<br>Արոտավայր<br>Այլ<br>Վարելահող<br>Արոտավայր<br>Արոտավայր<br>Արոտավայր<br>Արոտավայր |

Աշխատակազմի քարտուղար Գ. Մուշկամբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*06 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 67

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԱՐԵՎԻԿ>> ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ԵՎ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ընկերության կողմից մարզադաշտի համալիրի և հարակից տարածքի վերակառուցման և կատարելագործման նպատակով իրականացվելիք 500000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրումների չափը,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքում մանկապատանեկան ֆուտբոլը զարգացնելու և ֆուտբոլային խաղեր կազմակերպելու նպատակով համայնքային սեփականության <<Արևիկ>> մարզադաշտը անհատույց, ժամանակավոր օգտագործման 5 տարի ժամկետով տրամադրել <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ամբողջականությունն ապահովվելու նպատակով ձմռանը թույլատրել կազմակերպությանը օգտվելու մարզադպրոցի շենքից:
3. Սույն որոշումը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*06 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 68

**ԱՐՄԵՆ ՕԳՍԵՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 21 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4/1 ՏԱՐԱԾՔԸ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 21 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4/3 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՐԺԵՔ9,89 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Արմեն Օգսենի Զաքարյանի դիմումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արմեն Օգսենի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 03102019-10-0005/ Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց 21 շենքի թիվ 4/1 տարածքը փոխանակել Վայք համայնքի սեփականություն հանդիսացող/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 12122019/ Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց 21 շենքի թիվ 4/3 հասցեի համարժեք 9,89 քմ մակերեսով տարածքի հետ:
2. Սույն որոշումը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*06 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 69

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔ ՎԱՅՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 21 ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 4/5 և 4/7 ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով <<Գլոբալ Փարթներս Գրուպ>> ՍՊԸ-ի 07.02.2020թ. թիվ 08-0015 անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքին սեփականության իրավունքով պատկանող ք. Վայք, Շահումյան փողոց 21, 4/7 և 4/5 հասցեում գտնվող համապատասխանաբար 25,1 քմ և 2,7 քմ մակերեսով շինությունը /27,8քմ ներքին ընդհանուր մակերեսով/, հրապարակային սակարկություններով օտարել՝ սահմանելով 220000 դրամ մեկնարկային գինը:
2. Սույն որոշումը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 70

## ՇՈՂԻԿ ԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգ>>-ով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Շողիկ Ալոյանին սեփականության իրավունքով/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 05022019-10-0006/ պատկանող Վայք համայնքի Փոռ բնակավայրի 1-ին փողոց 12 հասցեում գտնվող հասարակական նշանակության խանութի գործառնական նշանակությանը փոխել որպես բնակելի գործառնական նշանակության՝ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru


*17 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 71

## ՁԵԴԵԱ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,082ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՑԱԾՐԱՐԺԵՔԻՑ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ձեդեա գյուղի բնակիչ Սուրիկ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ վարելահողը ցածրարժեքից փոխադրել բարձրարժեք
   1.1 ծածկագիր 10-023-322-009, սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1034109, մակերեսը-0,082 հա
2. Հողատեսքերը փոխադրվում է որպես հնդավոր այգի/խնձորի այգի/, հողի հարկի հաշվարկը կատարել նոր կադաստրային արժեքին համապատասխան:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 72**

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և կիրառելով ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» N 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները՝ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թ. մայիսի 16-ի թիվ 37 որոշումը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված ք. Վայք, Շահումյան 97/4/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 20,4 քմ մակերեսով օժանդակ շինությունը՝ ծածկը զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 20,4 քմ մակերեսով հողատարածքով, գնման նախապատմության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Սևակ Հովհաննիսյանին՝ շինության համար 44880/20,4X2200/ դրամ և հողատարածքի համար 16524/20,4X810/ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առքուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 73

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԱՆԳԵԼԻՆԱ ԼԵՎԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ /ծնված.20.01.2016թ./ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Ընտանեկան օրենսգրքի 109-րդ,134-րդ,135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02 հունիսի 2016թ N631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին մասի բ/ ենթակետի դրույթներով,հիմք ընդունելով 2020թ-ի հուլիսի 21-ի Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համանքի բնակիչ Անգելինա Լևիկի Հովհաննիսյանին /ծնվ.20.01.2016թ/ ճանաչել առանց ծնողական խնամքի մնացած երեխա և նրա նկատմամբ սահմանել խնամակալություն:
2.Խնամակալ նշանակել իր հոր կողմից պապին՝ Հովիկ Հովհաննեսի Հովհաննիսյանին /ծնվ.13.04.1959թ/ իր համաձայնությամբ, հիմք ընդունելով իր՝ Հովիկ Հովհաննեսի Հովհաննիսյանի Վայք համայնքի ղեկավարին ուղղված 15.07.2020թ.դիմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 74

## <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առանձնացվող Վայք համայնքի Ջերմուկ գյուղի 5-րդ փողոց 5 հասցեի ներքոհիշյալ հողատարածքները հասցեավորել որպես՝
   . 1,87037 հա- Վայք համայնք, գ. Ջերմուկ, 5-րդ փողոց, հողամաս թիվ 5 /հիմնական մայր հողամասի հասցեն թողնել անփոփոխ/
   . 0,32130 հա-Վայք համայնք, գ. Ջերմուկ, 5-րդ փողոց, հողամաս թիվ 5/1:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 75

## <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առանձնացվող Վայք համայնքի Ջերմա գյուղի 5-րդ փողոց 6 հասցեի ներքոհիշյալ հողատարածքները հասցեավորել որպես
   . 6,5 հա- Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/հիմնական մայր հողամասի հասցեն թողնել անփոփոխ/
   . 0,24415 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/1
   . 0,21067 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/2
   . 0,09987 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/3
   . 0,64603 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/4
   . 0,93335 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/5
   . 0,79852 հա-Վայք համայնք, գ. Ջերմա, 5-րդ փողոց, հողամաս թիվ 6/6:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**